ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/88

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «Գավառտրանս» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ
Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Մասնակցությամբ՝
Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ Վ. Մեժունցի, Գ. Մուրադյանի,
«Գավառտրանս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Գուլաբյանի, ներկայացուցիչ՝ Հ. Հովհաննիսյանի
«Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Թիրաբյանի
ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթ, կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գավառտրանս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 11.10.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 1-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը և հանձնաժողովի 01.10.2019թ.-ի թիվ 4-րդ արձանագրության 3 կետով կայացրած որոշումն ու հանձնաժողովին առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել համապատասխան շտկում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 11.11.2019թ.-ին: 12.11.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ:

Բողոքաբերի 15.11.2019թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 15.11.2019թ.-ի գրությամբ՝ սույն բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

19.11.2019թ.-ին և 27.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

19.11.2019թ. -ին «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Բողոքի քննությունն ավարտվել է 27.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.11.2019թ.-ին:

2. <u>«Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Գավառտրանս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանը Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով ս.թ. օգոստոսի 1 ին

կազմակերպել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ծածկագրով բաց մրցույթ: Ընթացակարգին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «ԷՍԷ ԳմբՀ» (ESE GmbH) և «Գավառտրանս» ՍՊԸ կոնսորցիումի միջոցով: Մրցույթին առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արտար Էկո Սերվիս» և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ների կոնսորցիումը: Հրավերի առաջին մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում տնտեսական գործունեության նույն խմբերում ներառված ապրանքների մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (համաձայնագրի) կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում /Առուվաճառքի պայմանագիր ք.Միելեց 09/07/2017 թարգմանություն լեհերենից/, որպես վաճառող կողմ նշված է՝ Contenur ՍՊԸ, այնինչ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում կոնսորցիումի

մասնակից նշված է «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ն: Ինչպես նաև ներկայացրած որակի RAL սերտիֆիկատը հավաստող փաստաթղթում նշված է միայն Contenur անվանումը:

Մրցույթի հրավերի 8.17 և 8.18 կետերով սահմանում է, որ «հրավերի 1-ին մասի 8.13 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն հրավերի 1-ին մասի 8.2 կետով սահմանված ժամկետներում: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

8.18 Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության և/կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն հրավերի 1-ին մասի 8.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է՝

- *կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.*
- *առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը»:»*

Ելնելով վերոգրյալից, «Գավարտրանս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 1-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը և հանձնաժողովի 01.10.2019թ.-ի թիվ 4-րդ արձանագրության 3 կետով կայացրած որոշումն ու հանձնաժողովին առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել պահամատասխան շտկում:

Ի լրումն 11.11.2019թ.-ին «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի, Ընկերությունը հայտնել է նաև հետևյալը.

«Երևանի քաղաքապետի տեղակալ պարոն Հ.Սարգսյանի կողմից ներկայացված պարզաբանման կապակցությամբ և հարկ ենք համարում նշել հետևյալը.

Տեղեկացնում ենք, որ «ԷՍԷ ԳմբՀ» (ESE GmbH) և «Գավառտրանս» ՍՊԸ կոնսորցիումը մասնակցելով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ծածկագրով բաց մրցույթին՝ տվյալ ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված կարգով, համաձայն որի՝ «պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև մասնակցի, այդ թվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը»:

Այսպիսով՝ «ԷՍԷ ԳմբՀ» (ESE GmbH) և «Գավառտրանս» ՍՊԸ կոնսորցիումը գրավոր դիմելով Պատվիրատուին, խնդրել է ներկայացնել ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի փաթեթը: Նույն օրը Պատվիրատուն տրամադրել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ /կոնսորցիում/-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո պարզել ենք, որ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ /կոնսորցիում/-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրում /առուվաճառքի պայմանագիր ք.Միելեց 09/07/2017, որպես վաճառող կողմ

նշված է՝ Contenur ՍՊԸ-ն, այնինչ կոնսորցիումի մասնակից կողմ նշված է «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ն:

Նշյալ կետի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված պարզաբանումը առ այն, որ «Գնահատող հանձնաժողովը գնահատելով կոնսորցիումի կողմից ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը (թարգմանություն լեհերենից հայերեն) չի որակել նշված պայմանագրում վաճառող կողմ նշված՝ Contenur ՍՊԸ անվանում եզրույթը, որպես անհամապատասխանություն հարվերի պահանջների նկատմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնսորցիումի կողմից ներկայացված վերը նշված պայմանագրում (բնօրինակից պատճենահանած), որպես վաճառող նշված է Contenur Polska SP z.o.o ընկերությունը, որի տնօրենը հանդիսանում է Միխալ Կոշուցկին...», ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից տվյալ հարցի շուրջ ներկայացված եզրահանգումը առ այն, որ «... Contenur ՍՊԸ անվանումը հանդիսանում է թարգմանելու արդյունքում առաջացած վրիպակ:» համարում ենք վիճելի հարց և խտրական վերաբերմունք, հաշվի առնելով այն պարզ հանգամանքը, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված մեկ այլ ընթացակագով, այն է՝ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1, Գնահատող հանձնաժողովը նշյալ ընթացակարգի 16.10.2019թ-ի 5-րդ արձանագրության 3-րդ կետով արձանագրել է, որ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի», որը նույն «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ /կոնսորցիում/-ն է, «ներկայացրած որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես. Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում /առուվաճառքի պայմանագիր ք.Միելեց 09/07/2017, որպես վաճառող կողմ նշված է՝ Contenur ՍՊԸ-ն, այնինչ կոնսորցիումի մասնակից կողմ նշված է «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊ ընկերությունը»: Եվ ընթացակարգի 5-րդ արձանագրության 4-րդ կետով Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով կարգի 47-րդ կետի դրույթներով առաջարկել է հանձնաժողովի քարտուղարին նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել կոնսորցիումին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հարց է առաջանում, թե ինչո՞ւ է Գնահատող հանձնաժողովը, որի կազմը նույնն է երկու ընթացակարգերի դեպքում էլ, մի ընթացակարգի դեպքում արձանագրելով անհամապատասխանությունները՝ պահանջել է շտկում, իսկ մյուսի դեպքում ոչ, հաշվի առնելով նաև այն հանգամանը, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ընթացակարգով տվյալ մասնակցից

ավելի վաղ ժամանակահատվածում են պահանջվել որակավորման փաստաթղթերը, քան ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ընթացակարգի դեպքում:

Անդրադառնալով «Գավառտրանս» ՍՊԸ կողմից 11.11.2019 թվականին ներկայացված բողոքի մյուս կետին, համաձայն որի «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ /կոնսորցիում/-ի կողմից ներկայացված որակի RAL սերտիֆիկատը հավաստող փաստաթղթում նշված է միայն Contenur անվանումը, և բացակայում է Contenur Polska SP z.o.o անվանումը, Երևանի քաղաքապետարանը պարզաբանել է, որ «Կարգի 21-րդ կետի 1-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հավաստում է գնման հայտը, որը ներառում է առարկայի բնութագրերը: Ապրանքի գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջում: Հրավերի Մաս II-ի 3-րդ կետով՝ «առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը» սահմանված պահանջում բացակայում է որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակցից համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջը և մասնակիցը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու փուլում, համապատասխանության սերտիֆիկատ ներկայացնելու որևէ պարտավորվածություն չուներ, ուստի՝ գնահատող հանձնաժողովն էլ իր հերթին ներկայացված սերտիֆիկատների առկայությունն ընդունել է ի գիտություն:»:

Նշյալ պարզաբանման հետ կապված, հարկ ենք համարում տեղեկացնել, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված մյուս՝ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ծածկարով ընթացակարգի շրջանակում՝ նույն կազմով Գնահատող հանձնաժողովը այնուամենայնիվ մանրամասնորեն դիտարկել է նշյալ ընթացակարգի շրջանակում 06 սեպտեմբերի 2019թ.-ի 2-րդ արձանագրությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի («Հարությունյան Շին» ՍՊ և «Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Իդիա /Կոնսորցիում) կողմից ներկայացված համապատաս-խանության սերտիֆիկատները և նույն ընթացակարգի 20.09.2019թ-ի 3-րդ արձանագրության 3-րդ կետով արձանագրել, որ («Հարությունյան Շին» ՍՊ և «Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Իդիա /Կոնսորցիումի կողմից ներկայացված ISO 9001:2015 SPRS ISO 9001:2015 և ISO 14001:2015 SPRS ISO 14001:2015 սերտիֆիկատները տրվել են «MNG

Plastik-Gogic doo Indjija» ընկերությանը, իսկ TUV Rheinland կողմից տրված 0001 և 0002 սերտիֆիկատները տրվել են «MNG Plastik-Gogic doo Kralja Petra I bb 22320 Indija Serbia» ընկերությանը:

Հարց է առաջանում, թե ինչո՞ւ է մի ընթացակարգի պարագայում Գնահատող հանձնաժողովը (որը ունի նույն կազմը) որոշել «ներկայացված սերտիֆիկատների առկայությունն ընդունել ի գիտություն», իսկ մյուս ընթացակարգի պարագայում կատարել մանրամասն ուսումնասիրություն և արձանագրել անհամապատասխանություն:

Անդրադառնալով Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված պարզաբանման վերջին հատվածին, համաձայն որի Երևանի քաղաքապետարանը նշում է, որ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 ընթացակարգի Գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, ապա հարց է առաջանում, թե ինչու է նույն Գնահատող հանձնաժողովը ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ընթացակարգի շրջանակում նույն «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիմքում դրված կետերով՝ ընթացակարգի մասնակիցներից պահանջել շտկումներ:

Հարկ ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ նշյալ երկու ընթացակարգերի՝ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 և ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1, հրավերներով սահմանված պահանջները նույնն են, չկա որևէ տարբերություն ապրանքի բնութագրի և հրավերով մասնակցի որակավորման համար սահմանված պահանջների միջև:

Անցում կատարելով «Արտար Էկո Սերվիս» և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ների կոնսորցիումի (այսուհետ նաև՝ Կոնսորցիում) կողմից, որպես RAL-GZ սերտիֆիկատ ներկայացվող TUV Sud ընկերության կողմից տրված փաստաթղթին՝ անհրաժեշտություն ենք համարում նշել հետևյալը.

«Արտար Էկո Սերվիս» և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթուղթը, որով փորձ է արվում ապացուցել, որ Կոնսորցիումի կողմից ներկայացվող աղբամանները անցել են RAL-GZ ստանդարտներով փորձարկում և ստացել RAL-GZ սերտիֆիկատ, ամենևին չի համապատասխանում իրականությանը և Կոնսորցիումի կողմից ներկայացվող TUV Sud ընկերության կողմից Contenur-ին տրամադրված փաստաթուղթը չի հանդիսանում RAL-GZ սերտիֆիկատ:

RAL-GZ սերտիֆիկատի առկայության պահանջը, որը դրված է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19 հրավերի (ամբողջական հրավերը կցվում է) պահանջներով իրենից ներկայացնում է RAL որակի վկայակոչում, որը աղբի և վերամշակման աղբարկղերի բոլոր տեխնիկական կողմերի շարունակաբար անցկացվող և անկախ վերահսկողություն է և իրականացվում է Հավատարմագրված Փորձարարական Ինստիտուտի կողմից: Սերտիֆիկացման գործընթացը և դրոշմապիտակի շնորհումը իրականացնում է Gütegemeinschaft Abfall- und

Wertstoffbehälter e.V. ասոցիացիան (այսուհետ նաև՝ GGAWB), որին է վերապահված նաև տրամադրված դրոշմանշանների և համապատասխան սերտիֆիկատի եր կանչման իրավասությունը: RAL-GZ սերտիֆիկատը ունի մեկ տարվա վավերականություն և յուրաքանչյուր տարի ենթակա է վերաստուգման, վերագնահատման և վերաշնորհման:

Հատկանշական է, որ «Արտար Էկո Սերվիս» և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից ներկայացվել է TUV Sud ընկերության կողմից Contenur ընկերությանը (ներկայացվող փաստաթղթում հստակ գրված է, որ տվյալ փաստաթղթի սեփականատերը Torneros, 3 Pol. In. Los Ángeles 28906 Getafe. Madrid հացեում գործունեություն ծավալող Contenur ընկերությունն է), այլ ոչ թե Contenur Polska Sp. z o.o ընկերությանը տրամադրված փաստաթուղթ, որում նշված է RAL-GZ 951/1 տողը: Սակայն այդ փաստաթղթում վերոնշյալ տողի առկայությունը ամենևին չի նշանակում, որ ընկերությունը իր արտադրանքը անցկացրել է RAL սերտիֆիկացում, կամ ունի RAL-GZ որակի վկայակոչում/սերտիֆիկատ: TUV Sud ընկերության կողմից իրականացվող հսկողությունը իրենից ներկայացնում է տեխնիկական արագ իրականացվող գործընթաց, չի համարվում RAL որակի դրոշմանշման համակարգով անցկացվող հաստատում և RAL համակարգի համաձայն՝ ուղղակիորեն հաստատում չի հանդիսանում: Նշենք, որ TUV Sud ընկերությունը ինքը ևս հայտարարում է, որ աղբի և վերամշակման աղբարկղերի վերահսկողությունն իրականացվել է TUV Sud ընկերության կողմից և համարվում է միայն GS դրոշմանշանի տրամադրում:

Նշյալի վերաբերյալ ժամանակին քննարկումներ են եղել RAL որակի հսկողությունն իրականացրող կազմակերպության և Վրացական մի կազմակերպության միջև, և նշյալ հարցի վերաբերյալ RAL որակի հսկողությունն իրականացրող կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն՝ RÜDIGER WOLLMANN-ի և գործադիր տնօրեն՝ THOMAS ROSSBACH-ի կողմից ներկայացված, ինչպես նաև GGAWB ասոցիացիայի նախագահի կողմից ներկայացված պաշտոնական գրությունները ներկայացնում ենք սույն գրությանը կից (բնօրինակ գրությունները՝ գերմաներեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև նշյալ գրությունների անգլերեն և հայերեն թարգմանությունները):

Միևնույն ժամանակ մենք ինքներս հարցում ենք կատարել GGAWB ասոցիացիային՝ RAL սրտիֆիկատի ստացման կարգի և RAL սերտիֆիկատ շնորհված կազմակերպությունների վերաբերյալ, և ստացել ենք պատասխան՝ համաձայն, որի բոլոր այն կազմակերպությունները, որոնց շնորհվում է RAL-GZ սերտիֆիկատ ներկայացված են GGAWB ասոցիացիայի պաշտոնական կայքում (մեր կողմից ուղարկված հարցման և GGAWB կողմից ստացված պատասխան նամակը կից ներկայացնում ենք): RAL սերտիֆիկատ ստացած կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ներկայացվում

է https://www.ggawb.de/en/quality-mark/awarded-quality-marks/ հղմամբ, ինչպես նաև մենք սույն գրությանը կից ներկայացնում ենք նշյալ կազմակերպությունների ցանկը և ստացված որակավորումների սանդղակը:

Այսպիսով, որպեսզի ընկերությունները կարողանան ստանալ RAL-GZ սերտիֆիկատ, ապա տվյալ ընկերությունների կողմից արտադրվող աղբամանը պետք է բարեհաջող անցնի, ինչպես EN 840 – ի բոլոր փորձարկումները, այնպես էլ՝ էլ ավելի պահանջախնդրորեն պետք է անցնի RAL-GZ ստանդարտներով լաբորատոր փորձաքննություններ: Հավելյալ պահանջվում է, որ անկողմնակալ լաբորատորիաների միջոցով հսկողություն իրականացվի արտադրության գործընթացի նկատմամբ, և աղբարկղի որակի ստուգումներ իրականացվի անմիջապես արտադրամասում: Եթե ամեն ինչ հաջող է, ապա GGAWB կազմակերպությունը քննության է առնում փորձաքննությունների և արտադրամասում իրականացված փորձաքննության եզրակացությունը, և եթե ամեն ինչ համապատասխանում է ստանդարտներին, ապա շնորհում է որակի RAL որակի նշանը, ինչի արդյունքում այդ նշանը ստացած ընկերության կողմից արտադրվող աղբամաններին տրվում է նույնականացման համար (modul numbr), որը պետք է առկա լինի բոլոր աղբարկղերի վրա, և որպես այդ ամենի ապացույց՝ տրվում է համապատասխան վկայական: Տրված նշանը և սերտիֆիկատը պետք է յուրաքանչյուր տարի վերահաստատվի: Այսինքն այն վավեր է մեկ տարի, և եթե շնորհված է այդ սերտիֆիկատը և նշանը, ապա այն պետք է դաջվի, ինչպես աղբամանի կորպուսի, այնպես էլ աղբամանի կափարիչի վրա: Որակի այս նշանը կարող է տրվել միայն GGAWB-ի կողմից:

Այս ամենի մասին կարելի է անմիջապես տեղեկանալ https://www.ggawb.de կայքից, որը հանդիսանում է RAL-GZ սերտիֆիկատ շնորհող ասոցիացիայի պաշտոնական կայքը:

Ընկերության պաշտոնական հասցեն է info@ggawb.de , որին և կարելի է պաշտոնապես հարցում անելով՝ համոզվել վերոգրյալում:

Այսպիսով՝ Contenur և Contenur Polska Sp. z o.o ընկերությունները կարող են ստանալ այդ սերտիֆիկատը միայն այն դեպքում, երբ կներկայացնեն GGAWB-ի կողմից պահանջվող ստուգաթերթում առկա բոլոր փորձաքննությունների և ուսումնասիրությունների վերաբերյալ փաստաթղթերը (GGAWB ընկերության կողմից պահանջվող ստուգաթերթը կից ներկայացվում է): Contenur-ին TUV Sud ընկերության կողմից տրամադրված GS-ը հանդիսանում է ընդհանուր անվտանգության և աշխատանքի անվտանգության սերտիֆիկատ, այն դեպքում, երբ RAL-GZ 951/1 սերտիֆիկատը բազմաթիվ որակի չափանիշների հետ մեկտեղ ներառում է նաև GS-ը: Մեր կողմից ներկայացվող գրության մեջ (որը RAL որակի ընկերության կողմից ներկայացվել է

Վրաստանին) պարզ է դառնում, որ այդ հարցի վերաբերյալ քննարկումներ են եղել նաև GGAWB-ի և TUV Sud-ի միջև ու եկել են այն եզրակացության, որ այդ երկու սերտիֆիկատները նույնական չեն և RAL-GZ 951/1-ը իր մեջ ներառում է TUV Sud ընկերության կողմից տրվածը, սակայն TUV Sud-ի կողմից տրվածը չի կարող փոխարինել RAL-ին, բայց միևնույն ժամանակ RAL սերտիֆիկատի առկայության դեպքում TUV Sud-ի կողմից տրված սերտիֆիկատ ունենալու պահանջ չի կարող առաջադրվել:

GGAWB ասոցիացիան հրապարակել է նաև RAL-GZ սերտիֆիկատի օգտագործման վերաբերյալ իրավական կարծիք, որը ներկայացնում ենք:

Այսպիսով, բացի այն, որ «Արտար Էկո Սերվիս» և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ների կոնսորցիումը չի կարող պնդել, որ TUV Sud ընկերության կողմից Contenur ընկերությանը տրամադրված սերտիֆիկատը նույնական է RAL-GZ 951/1 սերտիֆիկատի և ստանդարտների հետ, քանզի նրանք չեն իրականացրել ընթացակարգը RAL նորմերի համաձայն, միաժամանակ Կոնսորցիումը չի կարող պնդել նաև, որ TUV Sud ընկերության կողմից այդ փաստաթուղթը տրամադրվել է Contenur Polska Sp. z o.o – ին, քանի որ ներկայացված փաստաթղթում ուղղակիորեն և հստակ նշված է Contenur S.L. կազմակերպության անվանումը և հասցեն, որպես սերտիֆիկատի սեփականատերի, ինչպես նաև փաստաթղթում բացակայում է Contenur Polska Sp. z o.o ընկերության վերաբերյալ որևէ նշում կամ տեղեկատվություն:»:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 14.11.2019թ.-ի գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 11.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 18.11.2019թ.-ի թիվ 02/61-24327 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ մասի դրույթի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը...:

Կոնսորցիումի կողմից օրենքով սահմանված ժամկետներում տրամադրվել են հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր, այդ թվում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիրը և դրա պատշաճ կատարումը հաստատող համապատասխան փաստաթղթերը:

«Գավառտրանս» ՍՊԸ-ն բողոքի հիմքում դրել է այն հանգամանքը, որ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում /առուվաճառքի պայմանագիր ք. Միելեց 09/07/2017/, որպես վաճառող կողմ նշված է՝ Contenur ՍՊԸ-ն, այնինչ կոնսորցիումի մասնակից նշված է «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ն: Ինչպես նաև ներկայացված որակի RAL սերտիֆիկատը հավաստող փաստաթղթում նշված է միայն Contenur անվանումը:

Գնահատող հանձնաժողովը գնահատելով կոնսորցիումի կողմից ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը (թարգմանված լեհերենից հայերեն) չի որակել նշված պայմանագրում վաճառող կողմ նշված՝ Contenur ՍՊԸ անվանում եզրույթը, որպես անհամապատասխանություն հրավերի պահաջների նկատմամբ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնսորցիումի կողմից ներկայացված վերը նշված պայմանագրում (բնօրինակից պատճենահանած), որպես վաճառող նշված է Contenur Polska Sp z.o.o ընկերությունը, որի տնօրենը հանդիսանում է Միխալ Կոշուցկին:

Միաժամանակ՝ կոնսորցիումի կողմից տրամադրված նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում (բնօրինակից պատճենահանած) նշված են ընկերության վավերապայմանները՝ այդ թվում ընկերության ՀՎՀՀ-ն, որը ՀՀ հարկային օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հարկային մարմնում հաշվառվող հարկ վճարողին տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ), որը հանդիսանում է նրա նույնականացման կոդը: ՀՎՀՀ-ն միակն է և ենթակա չէ փոփոխման: ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Այսպիսով՝ համադրելով կոնսորցիումի կողմից ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը և դրա լեհերենից հայերեն թարգմանված տարբերակը, հստակ երևում է, որ պայմանագրի անվանումը, կնքման ամսաթիվը, դրա կողմ հանդիսացող ընկերության անվանումը, ինչպես նաև հանձման-ընդունման արձանագրությունը, կողմերի վավերապայմանները և այլն նույնն են, ուստի լեհերենից հայերեն թարգմանած պայմանագրում նշված Contenur ՍՊԸ անվանումը հանդիսանում է թարգմանելու արդյունքում առաջացած վրիպակ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիտողությանը, որ ներկայացված որակի RAL սերտիֆիկատը հավաստող փաստաթղթում նշված է միայն Contenur անվանումը, ապա՝ Կարգի 21-րդ կետի 1-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում»:

Հրավերի Մաս II-ի 3-րդ կետով՝ «առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը» սահմանված պահանջում բացակայում է որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակցից համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջը և մասնակիցը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու փուլում, համապատասխանության սերտիֆիկատ ներկայացնելու որևէ պարտավորվածություն չուներ, ուստի՝ գնահատող հանձնաժողովն էլ իր հերթին ներկայացված սերտիֆիկատների առկայությունն ընդունելի ի գիտություն:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով վերը նշված փաստական հանգամանքներով որոշում կայացնելիս, գործել է իրավաչափ, ուստի վերջինիս բողոքով ներկայացված պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Միաժամանակ՝ հաշվի առնելով, որ «Գավառարանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սույն բողոքը թվով երկրորդ անհիմն բողոքն է, որը ժամանակի ծգման միտում է ենթադրում, ինչի հետևանքով Երևան քաղաքում կարող է էապես վատթարանալ

սանիտարական վիճակը, ուստի՝ կարևորելով գնման առարկայի ձեռքբերումը, խնդրում եմ բողոքի քննությունն իրականացնել արագացված կարգով:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

«Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի տնօրենը, ներկայանալով 19.11.2019թ.-ին հրավիրված նիստին, բանավոր կերպով հայտնել է, որ «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ընդամենը պատճեններ են, որևէ շտամպ, ինչպես նաև անկախ գնահատական չկա: Ընկերության տնօրենը նաև նշել է, որ ընկերությունը Երևանի քաղաքապետարանին որակով և ժամանակին հանձնել է 4360 հատ աղբաման:

5. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքաբերի 15.11.2019թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 15.11.2019թ.ի գրությամբ՝ սույն բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչը հայտնել է, որ Ծառայության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կոնսորցիումի կողմից տրամադրված նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում (բնօրինակից պատճենահանած) նշված են ընկերության վավերապայմանները՝ այդ թվում ընկերության ՀՎՀՀ-ները նույնն են: Ներկայացուցիչը նաև հետաքրքրվեց, արդյո՞ք առկա է որևէ իրավական հիմք, որով կկարգավորվի RAL սերտիֆիկատը աղբարկղերի վրա պարտադիր առկա լինելու հանգամանքը, ինչպես նաև ապացույց այն մասին, որ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքն առանց սերտիֆիկատի առկայության է: Ծառայության ներկայացուցիչը գտնում է, որ սերտիֆիկատները գնահատելու համար բավարար ապացույցներ չեն ներկայացվել, հստակ հնարավոր չէ պարզել, թե ո՞ր

կազմակերպությունն է տալիս RAL սերտիֆիկատը, որպիսի պայմաններում սերտիֆիկատների իրավաչափության գնահատումը հնարավոր չէ իրականացնել: Միաժամանակ ներկայացուցիչը հայտնեց, որ պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումը հնարավորություն չունի ստուգելու մասնակցի կողմից ներկայացված սերտիֆիկատների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

6. <u>ԳԲՔԱ-LO-2019/88 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով 01.08.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում կենցաղային թափոնների կոնտեյներները, որոնց պետք է ունենան անձնագիր, EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներ:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.09.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 01.10.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանու-թյուններ չեն հայտնաբերվել:

Նույն արձանագրության համաձայն՝ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

02.10.2019թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

«Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից թիվ 3.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր որպես ապրանքի անվանում նշվել է՝ կենցաղային թափոնների կոնտեյներ, ապրանքային նշան և արտադրողի անվանում՝ Կոնտենուր Պոլսկա, ծագման երկիրը՝ Լեհաստան:

«Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ Z1A/029129/0049 Rev. 00 համարի սերտիֆիկատը տրվել է Contenur ՍՊԸ-ին (Los Torneros 3, Pol. Ind Los Angeles 28906 Getafe /Madrid/ SPAIN):

7. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 11.11.2019թ.-ին ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա է ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (02.05.2019թ.-ի N 516-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով

նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի

քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման

դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատաս-խանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով 01.08.2019թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում կենցաղային թափոնների կոնտեյներները, որոնց պետք է ունենան անձնագիր, EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներ:

Հանձնաժողովի 25.09.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված որոշում է կայացվել ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից Մրցույթի գնահատող հանձնաժողովին է ներկայցվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ 3.1 հավելվածը: Որպես ապրանքի անվանում նշվել է՝

կենցաղային թափոնների կոնտեյներ, ապրանքային նշան և արտադրողի անվանում՝ Կոնտենուր Պոլսկա, ծագման երկիրը՝ Լեհաստան:

«Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ Z1A/029129/0049 Rev. 00 համարի սերտիֆիկատը տրվել է Contenur ՍՊԸ-ին (Los Torneros 3, Pol. Ind Los Angeles 28906 Getafe /Madrid/ SPAIN):

Հանձնաժողովի 01.10.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ քանի որ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել վերջինս ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թեև Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ ներկայացնելու պահանջ չի նախատեսվել, իսկ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված է, որ սերտիֆիկատը ներկայացվում է պայմանագրի կատարման փուլում, սակայն, տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնահատող հանձնաժողովը պետք է առաջնորդվեր Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջներով և առաջարկեր «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունը, քանի որ «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողովին ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով նշված ապրանքային նշանը, արտադրողի անվանումը և ծագման երկիրը (Կոնտենուր Պոլսկա, Լեհաստան) և վերջինիս կողմից ներկայացված RAL սերտիֆիկատը, որը տրվել է Contenur ՍՊԸ-ին (Los Torneros 3, Pol. Ind Los Angeles 28906 Getafe /Madrid/ SPAIN) ակնհայտ հակասում են իրար:

Հատկապես այն դեպքում, երբ Հանձնաժողովին կամա թե ակամա հայտնի է դարձել, ըստ էության այն ապրանքի համապատասխանության սերտիֆիկատը, որը հետագայում՝ պայմանագրի կատարման փուլում միայն կարող էր հայտնի դառնալ և հանդիսանալ գնահատման առարկա:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքների գնման դեպքում Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի և ներկայացված սերտիֆիկատի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանության պարագայում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը

նույն օրն էլեկտրոնային եղանակով պետք է ծանուցեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը՝ կիրառելով Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 11.11.2019թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/88 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին.

1. դադարեցնել 01.10.2019թ.-ի թիվ 4-րդ արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշումը:

2. կայացնել որոշում՝ առաջարկել «Արտար Էկո Սերվիս» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ի հետ) ներկայացնել հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ շտկում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**